SB43 Հաճախ տրվող հարցեր

LOS ANGELES COUNTY DEPARTMENT OF MENTAL HEALTH
hope. recovery. wellbeing.

COUNTY OF LOS ANGELES Public Health
Substance Abuse Prevention and Control

Ի՞նչ է Սենատի թիվ 43 օրինագիծը

Սենատի թիվ 43 օրինագիծն ընդունվել և ստորագրվել է 2023 թվականին՝ ավելի քան 50 տարվա ընթացքում առաջին անգամ էապես թարմացնելով Կալիֆոռնիայի Հոգաբարձության մասին օրենքները: Օրինագիծն ընդլայնում է«Lanterman-Petris-Short Act»-ի օրենքով սահմանված լիազորությունները, որը կարգավորում է վարքային առողջության խնդիրներ ունեցող անձանց հարկադիր պահման, բուժման և հոգաբարձության գործընթացները:

Օրենքը, որը 2026 թվականի հունվարին ուժի մեջ կմտնի Լոս Անջելեսի վարչաշրջանում, ընդլայնում է «ծանր հաշմանդամ» (gravely disabled) հասկացության սահմանումը:

Ծանր հաշմանդամի վիճակը, հիմա ներառում է այն անձանց, ովքեր հոգեկան առողջության խանգարման, ծանր թմրամոլության խանգարման կամ այդ երկուսի՝ հոգեկան առողջության խանգարման և ծանր թմրամոլության խանգարման համադրվելու հետևանքով, անկարող են ապահովելու իրենց հիմնական անձնական կարիքները՝ սնունդ, հագուստ, կացարան, անձնական անվտանգություն կամ անհրաժեշտ բժշկական օգնություն:

Սենատի թիվ 43 օրինագիծը նաև ընդլայնում է այն վկայությունների շրջանակը, որոնք կարող են ներկայացվել հոգաբարձության գործերով ընթացող դատավարություններում, պարտադրում է վարչաշրջաններին հոգաբարձության քննության ընթացքում դիտարկել ավելի քիչ սահմանափակող այլընտրանքներ, ինչպես նաև ընդլայնում է պետական հաշվետվությունների պահանջները:

Ի՞նչ է Lanterman-Petris-Short Օրինագիծը

LPS Օրինագիծը 1967 թվականին ընդունված Կալիֆոռնիայի օրենք է, որով կարգավորվում են վարքային առողջության խնդիրներ ունեցող անձանց հարկադիր պահման, բուժման և հոգաբարձության գործընթացները: Օրինագիծը նախատեսում է հատուկ նշանակված հաստատություններում կարճաժամկետ հարկադիր պահման համակարգը և սահմանում ժամանակավոր և մշտական հոգաբարձության հաստատման գործընթացի պահանջները:

Ծանր հաշմանդամության չափանիշները և օրինակները

«Ծանր հաշմանդամություն» հասկացության նոր սահմանումը պահանջում է հստակ չափանիշների բավարարում: Անձը հոգեկան առողջության խանգարման, ծանր թմրամիջոցային կախվածության կամ դրանց համակցված առկայության հետևանքով պետք է անկարող լինի ապահովելու իր հիմնական անձնական կարիքները՝ սնունդ, հագուստ, կացարան, անձնական անվտանգություն կամ անհրաժեշտ բժշկական օգնություն:

Օրինակները ներառում են.

- Անձնական անվտանգությունը. Անձի՝ համայնքում առանց հարկադիր պահման անվտանգ գոյատևելու անկարողությունը.
    - Երթևեկության վտանգի ենթարկվելը:
    - Անձ, որը իր խոցելիության գիտակցման բացակայության պատճառով անկարող է պաշտպանել իրեն շարունակական վտանգներից, ինչը անմիջական սպառնալիք է այդ անհատի համար:
    - Դատողական ունակության ծանր խանգարում, որի հետևանքով անձը հայտնվում է ռիսկային իրավիճակներում՝ վտանգի ենթարկելով իր կամ շրջապատի մարդկանց կյանքը:

- Անհրաժեշտ բուժօգնություն՝ Հոգեկան առողջության խանգարման և/կամ ծանր թմրամիջոցային կախվածության պատճառով հարկադիր պահումը անհրաժեշտ է՝ կանխելու արդեն առկա ֆիզիկական առողջական վիճակի լուրջ վատթարացումը, որն անբուժելի թողնելու դեպքում մեծ հավանականությամբ կհանգեցնի ծանր մարմնական վնասվածքների.
    - Հղի կանայք, ովքեր ունեն ծանր հոգեկան հիվանդության և/կամ ծանր թմրամիջոցային կախվածության հետևանքով անտեսում են հղիության ընթացքում անհրաժեշտ խնամքը, հետևողական խնամքը, անօթևան են, գերօգտագործում են թմրամիջոցներ, հաճախ դառնում են բռնության զոհ և վտանգում պտղի առողջությունն ու կյանքը:
    - Ծանր թերսնման նշաններ (զգալի քաշի կորուստ կամ ջրազրկում), որոնք անձի առողջությունը լուրջ ռիսկի են ենթարկում:
    - Վերքերի խնամքի և վարակների խնդիրներ, որոնք բուժման բացակայության դեպքում մեծ հավանականությամբ կարող են հանգեցնել վերջույթի կորստի կամ մահվան:

Ի՞նչ է 5150 պահումը

5150 պահումը թույլ է տալիս անձին հարկադիր կերպով մինչև 72 ժամ հոգեբուժական հաստատությունում պահել այն դեպքում, եթե նա վտանգ է ներկայացնում իր անձի համար, վտանգ է ներկայացնում ուրիշների համար կամ ծանր հաշմանդամ է:

5150 պահումը քրեական ձերբակալություն չէ:

5150 պահումը կարող է նախաձեռնվել ոստիկանության կամ իրավապահ մարմնի աշխատակցի կողմից կամ Լոս Անջելեսի վարչաշրջանի հոգեկան առողջության վարչության կողմից հավաստագրված և LPS-ի լիազորած անձի կողմից: Պահման շրջանակի անձը կարող է ենթարկվել հարկադիր պահման և տեղափոխվել հաստատություն՝ հոգեկան առողջության և/կամ թմրամիջոցների օգտագործման խանգարման գնահատման համար, սակայն դա չի տրամադրում հարկադիր դեղորայքային բուժման կամ բժշկական միջամտության թույլտվություն:

Պահման ենթարկված անձը նաև պարտավորված չէ մնալու հիվանդանոցում ամբողջ 72 ժամվա ընթացքում:

Հաճախորդի վիճակը կայուն գնահատելուց կամ 72 ժամվա ավարտից հետո նա.

- Դուրս է գրվում կամ
- Ընդունվում է որպես կամավոր հիվանդ՝ բուժումը շարունակելու համար, կամ
- Հարկադիր կերպով պահվում է այլ տեսակի պահման կարգով:

Ի՞նչ է նախատեսում «ծանր» թմրամիջոցների օգտագործման խանգարումը նոր օրենքի համաձայն

Սենատի թիվ 43 օրինագծի համաձայն՝ կլինիկական միջավայրում բժիշկ-մասնագետը օգտագործում է Հոգեկան խանգարումների ախտորոշման և վիճակագրական ձեռնարկը (DSM-5-TR), որպեսզի սահմանի թմրամիջոցների օգտագործման խանգարման ծանրության աստիճանը: DSM-5-TR-ը ներառում է 11 չափանիշ, որոնք կարող են առաջանալ թմրամիջոցների օգտագործման խանգարման դեպքում:

- Թմրամիջոցների օգտագործման ծանր խանգարում. Անձի մեջ առկա են վեց կամ ավելի չափանիշ:
- Թմրամիջոցների օգտագործման միջին ծանրության խանգարում. Անձի մոտ առկա են չորս կամ հինգ ախտանիշ:
- Թմրամիջոցների օգտագործման թեթև ծանրություն. Անձի մոտ առկա են երկու կամ երեք ախտանիշ:

Չափանիշները հետևյալն են՝

1. Սահմանվածից ավելի մեծ չափով կամ ավելի երկարատև օգտագործում:
2. Օգտագործումը նվազեցնելու կամ թողնելու անհաջող փորձեր:
3. Չափազանց շատ ժամանակի վատնում՝ նյութ ձեռք բերելու, օգտագործելու, թունավորվելու և դրա ազդեցություններից ազատվելու համար:
4. Թմրամիջոցների փափագ կամ ուժեղ պահանջ/ ցանկություն:
5. Կարևոր պարտականությունների կատարման ձախողում:
6. Թմրամիջոցների օգտագործման շարունակելը՝ հակառակ սոցիալական/միջանձնային խնդիրների:
7. Գործունեությունների կամ հոբբիների նվազեցում կամ դրանցից լիովին հրաժարում:
8. Կրկնվող օգտագործում՝ ֆիզիկապես վտանգավոր իրավիճակներում:
9. Կրկնվող օգտագործում՝ հակառակ այդ օգտագործումից առաջացած ֆիզիկական կամ հոգեբանական խնդիրների կամ դրանց վատթարացման:
10. Հանդուրժողականություն:
11. Հրաժարում:

Տեղում՝ LPS-ի լիազորած անձը կատարում է դիտարկումների հիման վրա գնահատում, թե արդյոք տվյալ անձը ունի ծանր թմրամիջոցների օգտագործման խանգարում և համապատասխանում է արդյոք 5150 պահման համար նոր ընդլայնված չափանիշներին:

Սակայն LPS-ի լիազորած անձինք, որոնք անձանց 5150 պահման են ենթարկում թմրամիջոցների օգտագործման ծանր խանգարման պատճառով, չ**են կատարում կլինիկական ախտորոշում, այլ որոշում են կայացնում՝ ելնելով վերը նշված ընդհանուր չափանիշների վերաբերյալ իրենց դիտարկումներից:**

Ի՞նչ տեսակի հաստատություններ կարող են ընդունել անձին՝ միայն թմրամիջոցների օգտագործման ծանր խանգարման հետևանքով առաջացած ծանր հաշմանդամության դեպքում, 72 ժամից երկար ինտենսիվ բուժման համար:
Սկզբնական 72-ժամյա պահման ավարտից հետո, եթե որոշվում է, որ հաճախորդը ծանր թմրամիջոցների օգտագործման խանգարման պատճառով կարիք ունի լրացուցիչ հարկադիր բուժման, նրան կարող են տեղափոխել հետևյալ հաստատություններից որևէ մեկը. ընդհանուր սուր խնամքի հիվանդանոց, որը տրամադրում է անհրաժեշտ բժշկական օգնություն և/կամ քիմիական կախվածությունից վերականգնման ծառայություններ՝ որպես հավելյալ ծառայություն, կամ սուր հոգեբուժական հիվանդանոց, որը տրամադրում է անհրաժեշտ բժշկական օգնություն և/կամ քիմիական կախվածությունից վերականգնման ծառայություններ՝ որպես հավելյալ ծառայություն:

Ի՞նչ անել, եթե իմ հարազատը հիմա ունի հոգեկան առողջության կամ թմրամիջոցների կախվածության բուժման կարիք:
Հոգեկան առողջության և թմրամիջոցների օգտագործման ծառայությունների համար դիմեք Լոս Անջելեսի վարչաշրջանի օգնության թեժ գծին՝ (800) 854-7771 հեռախոսահամարով: Հանրային ֆինանսավորմամբ տրամադրվող թմրամիջոցների օգտագործման ծառայություններին կարելի է ձեռնհաս լինել նաև առցանց մատակարարների տեղեկագրքի միջոցով՝ SUDhelpLA.org կայքում:

**SB 43-ին վերաբերող տերմինների բառարանի և հնարավոր ցուցանիշների ու ախտանիշների ցանկը դիտելու համար այցելեք LACDMH-ի կայք՝ dmh.lacounty.gov/sb43 կամ սկանավորեք այս QR կոդը*